

ՏՐԱԿԱՆ ՀՈՂՈՎՈՎ ԵՆԹԱԿԱՆ ԳՐԱՐԱՐՈՒՄ

Է. Ս. ՄԿՐՏՉՅԱՆ

Անորոշ դերրայը գոյականական և բայական իր հատկություններով զրաբարում խոսքի մեջ ունի ձևաբանական և շարահյուսական հետաքրքրություններ, որոնք գրանորվում են բազմազան կիրառություններով: Այդ է պատճառը, որ անորոշ դերրայի հետ գործածվում են ուղղական, սեռական, տրական և հայցական հոլովներով ենթակաները: Հայտնի է, որ անորոշ դերրայի գոյականաբար գործածության, նախդրավոր լինելու դեպքում նրա հետ դրվում է սեռականով ենթական:

Այժմ հարց է ծագում՝ ո՞ր դեպքում է անորոշն ունենում տրականով ենթակա:

Նախ՝ տրականն անորոշի հետ (dativus cum infinitivo) անշտ ըմբռնելու համար հիմք պիտի ընդունել ենթակայի և ստորոգյալի հատկանիշների, նրանց էության ու փոխադարձ պայմանավորվածության դրսևորումը տրականի ու անորոշի միջոցով:

Ապա՝ տրականն ու անորոշը միմյանց նկատմամբ ենթակայական-ստորոգելիական փոխհարաբերություն են ցույց տալիս այն դեպքում, երբ անորոշ դերրայը բայի նշանակությամբ է գործածվում¹: Այդ նշանակությամբ դերրայը դրվում է ուղղական հոլովով²: Օրինակներ՝ Որ իբրև զհանդերձ կարծէր ունել մեզ զքրիստոնէութիւնն (Ե., 5-րդ, 147—148)՝ Որ կարծում էր, թե մենք քրիստոնեությունն իբրև զգեստ ունենք հազաւծ: Նա և ընդ լինելն իսկ սատանայի յԱստուծոյ, դիտաց՝ եթէ անսաստել ումեք Աստուծոյ շար է և ոչ բարի (Եզն., 1-ին, 36)՝ Սատանան աստծուց լինելու պահին իմացավ, որ շար է և ոչ բարի, երբ մեկը անսաստում է աստծուն: Եւ զկանայս հասարակաց ամենեցուն համարել, և մի՛ ումեք մի կին առանձինն ունել. այլ զոր արքն կամիցին և կանայքն ախորժիցեն, աչնց ընդ այնս լինել (Եզն., 3-րդ, 143)՝ Եւ կանանց հավասար համարել բոլորի համար, այնպես որ մեկը առանձին կին չունենա, այլ որոնց հետ մարդիկ ուզենան կենակցել, և կանայք ախորժեն, նրանք նրանց հետ բոլ լինեն. Ի՛ զուր է կա՛լ կա՛լն ասել ումեք ի կալս՝ և ոչ ա՛ռ ա՛ռ (Եզն., 1-ին, 72)՝ Ի՞զուր է կալերում մեկն ասում՝ բռնի՛ր, բռնի՛ր, և ոչ ա՛ռ, ա՛ռ: Առաքէ ի կողմն հիսիսոյ զմի ոմն յորդոց իւրոց առ Հայկ արամբք հավատարմօք սալ նմա ի հնազանդութիւն (Խոր., 1-ին, ԺԱ, 37)՝ Հավատարիմ մարդկանցով հյուսիսի կողմը, Հայկի մոտ է ուղարկում իր որդիներից մեկին, որ նա գա հնազանդության:

Տրական հոլովի հետ բուն ըմաստով, բայական նշանակությամբ անորոշ դերրայը դրվում է և սեռական հոլովով³: Օրինակներ՝ «Վասն ունելոյ ինձ զձեզ ի սրտի»՝ Ձեզ սրտիս մեջ ունենալու համար. որ ես ձեզ սրտիս մեջ ունենամ: Դերրայը նախադրության հետ է գործածված, հնարավոր է և առանց դրան՝ «Ձկայր յոյս՝ այլում զաւակի ելանելոյ»՝ Հույս չկար, որ ուրիշ զավակ ելներ, ծնվեր: Ձավակի գոյականը դրված է տրական հոլովով (տվյալ դեպքում ստուգությունը հաստատվում է հոլովների համաձայնության օրենքով, այլում դերանվան շնորհիվ, որը դրված է տրական հոլովով) և ելանելոյ սեռականի՝ դերրայ-ստորոգյալի ենթական է:

«Ակն ունէին՝ նմա այտնելոյ կամ մեռունելոյ»՝ Սպասում էին, որ նա ուռչի կամ մեռնի:

Անորոշ դերրայի գործիականը կարող է ունենալ տրականով ենթակա: Օրինակներ.

Լինելով նմա կամօք ի հոգի կենդանարար (Մաշտոցի մասին է):

Որպես զհրաշագարդագոյն զոլով քեզ ի փառս:

Ջայտոսիկ կրելով ումեք, հրաժարեսցէ ի բժշկական արհեստիցն⁴:

1 Ստ. Մալխասյանց. Գրաբարի համաձայնությունը, Թիֆլիս, 1892, էջ 37:

2 Նույն տեղում:

3 Ստ. Մալխասյանցը սեռականից բացի նշում է և տրականը, սակայն ոչ մի օրինակ չի բերում: Ի միջի այլոց, տրական հոլովով անորոշի հետ տրականով ենթակա չի հանդիպում: Ջալըխյանը նույնպես ականարկում է տրականի մասին, բայց օրինակ չի բերում:

4 Տե՛ս Արսեն Բագրատունի, Հայերէն քերականութիւն ի պէտս գարգացելոց, 1852:

Անորոշ դերբայի՝ տրականի հետ կիրառության նմանակությամբ սակավադեպ գործածվում են անցյալ դերբայն ու տրականով ենթական⁵, օրինակ՝ Յանձնեալ ձեզ ի նոցանէ աղօթիք, յամուր տեղուդ ուրեք թողաիք զնոսա. Այլ ումեք ի ծառայիցն ոչ կարացեսլ:

Տրականը անորոշի հետ (dativus cum infinitivo) կապակցությունն ընդհանրապես պահանջող, թեևադրող բայի նկատմամբ ունեցած հարաբերության տեսակետից որոշ իմաստով անկախ է: Առանց որևէ բայի պահանջի, այն կարող է գործածվել և ավարտուն միտք արտահայտել: Վերը բերված օրինակներում տրականն անորոշի հետ (dativus cum infinitivo) կապակցությունները բայերի, առանձին բառերի պահանջի, որոշակի դարձած կանոնի արդյունք չեն:

Այդ իմաստով դրանք անկախություն ունեն, ինքնուրույնարար գործածվող կապակցություններ են: Այստեղ խոսքը չի վերաբերում այն կուպին, որ այդ կապակցությունները կարող են հանդիսանալ գլխավոր բայ-ստորոգյալի լրացումը՝ արտահայտելով բազմազան հարաբերություններ և վարելով տարբեր ֆունկցիաներ⁶:

Օրինակ՝ Հայեցուածոցն դժնութենէ աշեն պայքել որձաքար վիմացն (Խոր., 2-րդ, ԽԲ, 163—164)՝ Ասում են, որ որձաքար վիմերը պայթել են հայացքի դաժանությունից: Ամբողջ կապակցությունը (ի հայեցուածոցն դժնութենէ պայքել որձաքար վիմացն) ասեն ստորոգյալի ուղիղ խնդիրն է:

Չի ոչ փոքր ինչ կասկած է՝ աներկիւղ այսպէս ումեք տալ զանձն յայսպիսի վաստակս (Փ., Ե, 6)՝ Որովհետև քիչ կասկած չկա, որ մեկն աներկյուղ իր անձն այսպես վտանգի ենթարկի: Դերբայական կապակցությունը (աներկիւղ այսպէս ումեք տալ զանձն յայսպիսի վաստակս) է=կա բայ-ստորոգյալի վերաբերության անուղղակի խնդիրն է:

Առաքէ ի կողմն հիւսիսոյ զմի ոմն յորդոց իւրոց առ Հայկ արամք հաւատարմօք, զալ սմա ի հնազանդութիւն (Խոր., 1-ին, ԺԱ, 37)՝ Դերբայական կապակցությունը (զալ սմա ի հնազանդութիւն) առաքէ ստորոգյալի լրացումն է, նպատակի պարագան (ուղարկում է, որպեսզի նա զա հնազանդութիւնը):

Այսպիսով, տարբեր ֆունկցիաներով դերբայական այդ կապակցությունները որոշակի բայերի, կանոն դարձած երևույթի, առանձին բառերի օրինաչափ պահանջի արդյունք չեն: Այդ պատճառով էլ կարող են էլի շատ բայերի մոտ դերբայական կապակցություններ հանդես գալ զանազան ֆունկցիաներով: Նույնիսկ շատ հնարավոր է դրանց կիրառությունը առանց բայ-ստորոգյալի առկայության. տվյալ դեպքում կունենանք առանձին դերբայական նախադասություններ, ինչպիսին կազմվում են և անցյալ դերբայով: Օրինակ՝ «Զհետ երթայք սիրոյ և նախանձաւոր լինել ամենեցուն հոգեւորացն» (Կ., Բ, 32) նախադասության մեջ «նախանձաւոր լինել ամենեցուն հոգեւորացն» (Ամենքն էլ նախանձաւոր լինեն հոգեւորականներին) դերբայական նախադասությունը որևէ անդամի լրացումը է (հմմտ. Ուրոց առեալ զամենայն նախաբարազունդ աւագանւոյն ամբոխ, ի քաղաքէն ելեալ պատահէին երանելոյն... (Կ., Թ, 54)):

Սակայն, տրականն անորոշի հետ (dativus cum infinitivo) դերբայական կապակցությունը իր «անկախ» լինելուց զատ, կարող է լինել և կախյալ վիճակում, հանդես գալ մի որոշակի խումբ բայերի պահանջով, դառնալ նրանց թեևադրանքի նյութը, ածանցական բաղադրամասը: Այդպիսի բայերը կամ բայական իմաստ արտահայտող կապակցությունները, որոնք գործածվում են միայն էրորդ դեմքով, կոչվում են միադիմի բայեր: Այդ միադիմի բայերը, որոնք երկու տեսակ են⁷, ֆունկցիոնալ (թուի, կարծի, հառանէ, մարթի և այլն) և բուն կամ քարձակ (արժան է, ի դեպ է, դէպ լինի, հաճոյ է, հարկ է, հնար է, գոյ հնար, մարթ է, պատեհ է, պարտ է, պիտոյ է, վայել է, փոյթ է և այլն) պահանջում են տրականն անորոշի հետ դերբայական կապակցությունը: Այսպիսով, ստացվում է նախադասության այնպիսի կառուցվածք, որտեղ միադիմի բայերը դրվում են անորոշ դերբայի վրա՝ տրական հոլովով ենթականի մոտ⁸:

Օրինակներ՝ Յայդմ շէր աւծսն քեզ խորշել և փախչել (Ե., 2-րդ, 46)՝ Վայել չէր, որ դու դրանից խորշիր և փախչիր: Յորժամ եկի ես յաշխարհն Հայոց՝ զտարի մի և վեց ամիս եհաս

⁵ Նույն տեղում:

⁶ Ս. Ղ ա զ ա ր յ ա ն, Հայոց գրական լեզվի պատմություն, Երևան, 1961, Ա հատոր, էջ 400:

⁷ Ա. Ա. Արրահամյան, Գրաբարի ձևաբանություն, 1964, էջ 224: Գրաբարի քերականության պատմության մեջ դրանք անվանվել են նաև դիմադուրկ բայեր (Մ. Չամչյան, Հ. Չալիխյան, Ա. Այտընյան և ուրիշներ):

⁸ Նույն տեղում, էջ 225:

⁹ Նույն տեղում, էջ 226:

շրջել ինձ անդ (Ծ., 8-րդ, 245)՝ Երբ ես եկա հայոց աշխարհը, ինձ վիճակվեց (ես կարողացա) մի տարի և վեց ամիս շրջել այնտեղ, Զէ ինչ նմա փոյր դայնմ ամենայնէ (Ծ., 8-րդ, 250)՝ Նա այդ բոլորի վրա ուշադրություն չի դարձնի: Պարտ էր նմա հպատակ լինել (Ծ., 8-րդ, 268)՝ Նա պետք է հնազանդ լիներ: Եւ եթէ զմեզս ձեր ողորմութեամբ պարտ էր փախել ձեզ (Բ., 4-րդ, 7, 79)՝ Եվ թե՛ ձեր մեղքերը դուք ողորմությամբ պետք է քաղեք: Եւ եթէ էր ոք ի վեր քան զնա, նմա պարտ էր առնել զերկինս և զերկիր (Եզն., 2-րդ, 91)՝ Եվ եթե իրենից բարձր մեկը կար, նա պետք է ստեղծեր երկինքը և երկիրը: Պարտ էր նմա ամաչել (Ազ., 1-ին, ԺԹ, 108)՝ Նա պետք է ամաչեր:

Ինչպես նկատելի է, միադիմի բայերով կազմված այդ ձևերը թարգմանվում են ըզձական, հարկադրական եղանակներով, իսկ դեմքը որոշողը ենթական է. ըստ որում, դերանունները լինում են առաջին, երկրորդ և երրորդ դեմքերով, իսկ գոյականները և գոյականաբար առնված բառերը՝ երրորդ դեմքով¹⁰: Օրինակ՝ Եւ ի դէպ էր Աղամայ ասել (Եզն., 4-րդ, 179)՝ Եվ պատշաճ էր, որ Աղամն ասեր: Զի եթէ հնար ինչ էր մարմնաուրաց զկերպարանս փոփոխել (Եզն., 1-ին, 72)՝ Եթե հնարավոր լիներ, որ մարմնավորները փոփոխեին (իրենց) կերպարանքները: Աղամը գոյականը և մարմնավորները ածականը դրված են երրորդ դեմքով:

Նայած միադիմի բայերի արտահայտած իմաստին՝ գրաբարում նրանցով կազմված ներկարգրական ձևերը կարող են արտահայտել հարկադրական, անհրաժեշտության, կարելիության և այլ գաղափարներ:

Գրաբարի բայը շունի հարկադրական եղանակի հատուկ ձև: Սակայն ստորադասական եղանակի ձևերը գործածվում են հարկադրական եղանակի իմաստով: Ըստ երևույթին, ստորադասական եղանակի ձևերը բավարար չափով չէին արտահայտում հարկադրականի բազմազան իմաստները, և այդ պատճառով էլ օգտագործվում են նկարագրական ձևերը¹¹: Այսպես, օրինակ, մի շարք բայեր՝ պարտ է, պիտոյ է, պէտ է, արժան է և այլն, որոնք արտահայտում են հարկադրական-պարտավորական կամ անհրաժեշտության գաղափար, նկարագրական ձևեր կազմելով դերբայական կապակցությունների հետ, արտահայտում են հարկադրական եղանակի իմաստ: Օրինակներ՝ Զի պարտ էր ձեզ յիշել զերախտիս տեառն ձերոյ Քրիստոսի (Բ., 3-րդ, ԺԴ, 40)՝ Որովհետև դուք պետք է հիշեիք ձեր տիրոջ՝ Քրիստոսի, երախտիքները: Եւ արժան էր ձեզ ունել զութ ընդ նոսա, որք... (Բ., 3-րդ, ԺԴ, 40)՝ Դուք պետք է զութ ունենայիք նրանց նկատմամբ, որոնք... Բայց քեզ արժան էր զիս ի հրապարակի սպանանել (Բ., 5-րդ, 2, 209)՝ Դու ինձ հրապարակում պիտի սպանեիր: Ձեզ չէր արժան ամենևին մոտ երթալ առ նոսա (Ծ., 8-րդ, 268)՝ Դուք բոլորովին չպետք է գնայիք նրանց մոտ (կամ՝ բոլորովին վայել չէր, որ դուք գնայիք նրանց մոտ): Այլ նմա պարտ էր հաբկանել զայն զսպասաւորութիւն (Եզն., 2-րդ, 127)՝ Այլ նա պետք է այն սպասավորությունն աներ: Եւ զի՝ պիտոյ է մեզ բնաւ մի ըստ միոջէ բուել (Եզն., 1-ին, 15)՝ Եվ բնավ մենք ինչո՞ւ պետք է մեկ առ մեկ թվենք: Արդ՝ չէ պարտ կեալ դմա. զի որդի վրիժապարտի է դա (Ազ., 1-ին, 70)՝ Դա չպետք է ապրի, որովհետև դա վրիժապարտի որդի է: Ինձ ոչ է պիտոյ յաղագս այդպիսի իրաց մի ըստ միոջէ տեղեկեցուցանել զձեզ (Փ., ԻԸ, 54)՝ Պետք չէ, անհրաժեշտ չէ, որ այդպիսի բաների մասին մեկ առ մեկ տեղեկացնեմ ձեզ: Զքեզ Աստուածն քո նորոգեսցէ՝ թէ ոչ. ինձ ոչ է պէտ զայնմանէ... (Ազ., 1-ին, 69)՝ Քո աստվածը կը նորոգի՝ քեզ, թե ոչ, անհրաժեշտ չէ, որ ես իմանամ այն մասին:

Ժամանակակից հայերենը պետք է, անհրաժեշտ է, պիտի բայերով չի գործածում դերբայական այնպիսի կապակցություններ, որոնք կազմված լինեն անորոշ դերբայից և տրականով ենթակայից: Այսպես, «Նրան պետք է գնալ գրադարան» կառուցվածքն անընդունելի է, սխալ է. ճիշտ կիրառությունը կլինի՝ «Նա պետք է գնա գրադարան»: Այլ իմաստ ունի «Նրան պետք է հարգել» կառուցվածքը, ուր «Նրան»-ը խնդրի պաշտոն է կատարում և ենթակա լինել չի կարող:

Վերը նշված հարկադրական-պարտավորական կամ անհրաժեշտության գաղափար արտահայտող եղանակիչ բայերի միջոցով կազմված նկարագրական ձևերի նման կիրառություններ գտնում ենք, օրինակ, ռուսերենում, ուր անդեմ (безличный) բայը դրվում է անորոշի (инфинитив) վրա՝ տրական հոլովով ենթակայի մոտ: Օրինակ՝ Мне надо ехать Ես պետք է գնամ: Тебе должно присутствовать Դու պետք է ներկա լինես = Անհրաժեշտ է, որ դու ներկա լինես: Ему нечего делать Նա ոչինչ չունի անելու:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Նույն տեղում:

կարծես, սրանց զուգահեռ ձևերը կան հենց գրաբարում՝ Պարտ է ինձ գնալ. Արժան է, պիտոյ է քեզ ներկա լինել. Ոչ է պիտոյ նմա առնել, ունել:

Զուգահեռ ձևերի գոյությունը միայն վկայում է (սակայն ոչ բոլոր դեպքերում) հիմք լեզվից այլ լեզուների առաջացման մասին:

Հարկադրական նշանակություն ունեցող այդ բայերը գրաբարում օգտագործվում են նաև միայն անորոշ դերբայի հետ՝ տրական հոլովով ենթակայի բացակայությամբ. Այդ դեպքում արտահայտվում է ընդհանուր բնույթի հարկադրական-պարտավորական կամ անհրաժեշտաբար կատարելիք գործողություն¹²:

Հարկադրական բնույթի միադիմի եղանակիչ բայերից բացի, անորոշ դերբայի հետ՝ տրական հոլովով ենթակայի մոտ (dativus cum infinitivo) գործածվում են նաև այլ բնույթի մի շարք միադիմի բայեր, որոնք զանազան երանգավորումներով եղանակավորում են բայերը¹³. Այս ձևով որոշ միադիմի բայեր արտահայտում են հնարավորության երանգավորում:

Օրինակ՝ Եւ մարք էր մեզ մեռանել վասն սիրոյն Քրիստոսի (Ե., 2-րդ, 58)՝ Եվ հնարավոր էր, պետք էր, որ մենք մեռնեինք Քրիստոսի սիրո համար: Եւ եթէ նմա ոչ մարքի զալ՝ զի մի՛ աշխարհ ի խաւարի մնասցլ (Ե., 3-րդ, 241)՝ Եվ թե հնարավոր չէ, որ նա գա, որպեսզի աշխարհը խավարի մեջ չմնա: Արդ ոչ է հնար ձեզ ապրել ի մահուանէ (Ե., 8-րդ, 269)՝ Այժմ հնարավոր չէ, որ դուք փրկվեք մահվանից: Եւ ըստ այնմ ոչ յառաջել ումեմ մեռնել հնար իցէ և ոչ յամենալ (Եզն., 2-րդ, 107)՝ Եվ ըստ այսմ, հնարավոր չէ, որ մեկը մեռնի նրանից առաջ կամ հետո: Եւ ընչի իմիմ յոչընչի չէ հնար գնալ (Եզն., 2-րդ, 131)՝ Եվ անհնար է, որ ինչ-որ բան ոչնչի վրա քայլի, քնա: Զի ոչ լիցի հնար քեզ երագ մեռումել (Ազ., 1-ին, 61)՝ Անհնար է, որ դու շուտ մեռնես: Ոչ է հնար մեզ զերծանել ի շարէս յայսմանէ մինչև ի սպառ (Փ., 1, 58)՝ Անհնար է, որ մենք այս շարիքից իսպառ աղատվենք:

Որոշ միադիմի բայեր դրսևորում են համարության երանգավորում:

Օրինակներ՝ Պատշան էր և ձեզ խնամել զնոցին որդիսն և զաշակերտսն (Բ., 3-րդ, ԺԴ, 40)՝ Հարմար է, որ դուք խնամեիք նույն որդիներին և աշակերտներին: Արեաց զնղին պատեմ է դիպան ելանել զօրացն ճունաց (Բ., 5-րդ, Դ, 288)՝ Հարմար է, որ արյաց գունդը դեմ դուրս գա հունաց զորքին: Այլ զԱստուծոյ զպատին և զպաշտօն ոչ ումեմ վայել է տալ (Ազ., 1-ին, 31)՝ Բայց վայել չէ, հարմար չէ, որ մեկը աստծուն պատիվ տա, պաշտի: Զի ոչ է մարք հովուի բողովու զխաշն իւր (Բ., 4-րդ, ՄԵ, 177)՝ Որովհետև պետք չէ, հարմար չէ, որ հովիվն իր ոչխարները թողնի:

Այս ձևով միադիմի բայերը արտահայտում են կարելիության երանգավորում՝ Իրեւ յայտնի զայս ոչ մարք էր նմա առնել. կեղծաւորել կերպարանէր (Բ., 5-րդ, ԻԴ, 222)՝ Բայց հայտնապես նա այս բանը չէր կարող անել կեղծավորաբար:

Քանզի չմարքի բնութեան իմիմ՝ առանց կամաց՝ մերթ բարի լինել, մերթ շար (Եզն., 1-ին, 38)՝ Որովհետև ինչ-որ էություն չի կարող ակամա մերթ բարի լինել, մերթ շար:

Հարկադրական-պարտավորական կամ անհրաժեշտության, հնարավորության, հարմարության, կարելիության և նման իմաստներ արտահայտող միադիմի եղանակիչ բայերը հաճախ դրվում են անկանոն և պակասավոր բայերի վրա՝ տրականով ենթակայի մոտ, ու պահպանելով կատարելի գործողության հիշյալ երանգավորումները՝ ստեղծում են գրաբարին չափազանց տիպական ոճական արտահայտություններ:

Անկանոն և պակասավոր բայերը այդ դեպքում օգտագործվում են ոչ միայն դերբայական (անորոշ դերբայի), այլև դիմավոր ձևերով կամ այլ բառերի հարադրությամբ:

Անկանոն բայերից լինել, ունել բայերը հաճախ են հանդիպում միադիմի եղանակիչ բայերի հետ:

Դեռ ավելին, «լինել»-ը գործածվում է նաև եղանակիչ բայի դերով՝ շատ անգամ արտահայտելով ցանկալի գործողության, ըղձանքի գաղափար:

Օրինակներ՝ Զի հնար լիցի նմա նախ ըմբռնել (Բ., 5-րդ, ԽԴ, 259)՝ Որ նա կարողանա նախ բռնել (նրան հնար լինի բռնել=նա կարողանա բռնել): Քանզի մոռացօնք եղեն նմա գալուստ Որդոյն Աստուծոյ (Ե., 4-րդ, 132)՝ Որովհետև նա մոռացության էր տվել աստծու որդու գալուստը (մոռացօնք եղեն—ձևը, հարկադրական բովանդակությամբ, միադիմության դեր ունի և պահանջում է տրականով ենթակա): Եթէ երբ լինիցի մեզ տեսանել զսիրելիսն մեր (Ե., 8-րդ, 296)՝ Թե երբ կլինի, որ մենք տեսնենք մեր սիրելիներին (կատարելիք, սակայն, ավելի շատ-

¹² Նույն տեղում, էջ 227:

¹³ Նույն տեղում:

ըղձանքի, ցանկալիության գաղափարն է արտահայտված)։ Իսկ ինձ լիցի ամենայն հնազանդութեամբ և ամենայն միամտութեամբ և երկիւղի պաշտել զԱստուած արարի։... (Ագ., 1-ին, 34)՝ Իսկ ես կարողանամ ամենայն հնազանդությամբ, հավատարմությամբ և երկյուղով պաշտել արարիչ աստծուն... (կարելիության գաղափարն արտահայտված է ցանկալիության երանգով)։ Եթէ լիցի քեզ ելանել ի ժառանգութենէ անտի կենացն Աստուծոյ (Ագ., 1-ին, Ժէ, 101)՝ Եթէ դու կարողանաս աստծու տված կյանքից, այն ժառանգությունից շուրջ ելնել, հրաժարվել (պայմանի երանգով է ասված)։ Այնուհետև զՊարսիկս ի մեզ թողէք, և ձեզ փոյր մի՛ լիլի (Վ., 27, 133)՝ Այնուհետև պարսիկներին մեզ թողեք և դուք մի՛ մտահոգվեք։ Ի վաղուէ հետէ փոյր լիցի ձեզ շինել զյարկս հանգստոցաց (Ագ., 3-րդ, Ժ, 376)՝ Վաղվանից դուք հոգ տանեք՝ կոռուցելու հանգստյան տներ։ Ամենեցուն մեզ յանդիման լինել կայ առաջի բեմին Քրիստոսի (Եզն., 4-րդ, 202)՝ Մենք բոլորս էլ պիտի ներկայանանք Քրիստոսի բեմի առաջը (լանդիման լինել կայ նկարագրական ձևը հարկադրական գաղափար է արտահայտում)։

Ունել անկանոն բայը ունենալ, ինչպես նաև՝ բռնել, մնալ նշանակությամբ, միադիմի եղանակիչ բայերի կամ այլ բառերի վրա դրվելով, կազմում է նկարագրական ձևեր և հաղորդում զանազան երանգավորումներ։ Օրինակ՝ Որ իբրև զհանդերձ կառնէ ունել մեզ զքրիստոնէութիւնս (Ե., 5-րդ, 147—148)՝ Նա, որ կարծում էր, թե մենք քրիստոնեությունն իբրև զգեստ ունենք հագած։ Պարտ է նմա զամենայն կարողություն յանձին ունել (Եզն., 4-րդ, 174)՝ Պետք էր, որ նա իր մեջ ունենար (աստվածության) բոլոր կարողությունները։ Ո՞րչափ ևս առաւել զայնչափ ծանրութիւն երկրի է նմա օդոյ ի վեր ունել (Եզն., 2-րդ, 133)՝ Օդը երկրի այդ սակավ ծանրությունը չի կարող վեր բռնել պահել (ունել բայն այստեղ ունի բռնել նշանակությունը)։ Ջիկէսքն ասեն՝ թէ չէր մարք մարմնաւորի անմահ կալ (Եզն., 1-ին, 51)՝ Ոմանք (կեսը) ասում են թե մարմնավորը չի կարող անմահ մնալ։

Տալ, զալ անկանոն բայերը կարող են նույնպես տարբեր նշանակություններով գործածվել եղանակիչ բայերի իմաստով կազմված նկարագրական ձևերում՝ Իսկ նա այնչափ յիմարեցոյց և ապշեցոյց զմիտս մոգպետին, մինչև չես նմա իմանալ զեյս իրացն (Ե., 3-րդ, 92)՝ Իսկ նա այնքան հիմարացրեց ու շվարեցրեց մոգպետի միտքը, որ նույնիսկ չթողեց, որ նա գործի հետեւանքները հասկանա (տալ բայը դրվել է իմանալ անորոշի վրա և տրականով ենթակայի հետ կազմել նկարագրական յուրահատուկ ձև՝ թույլատրելու երանգավորումով, այստեղ մինչև մակբայը ևս կարևոր դեր ունի պահանջի, թելադրանքի տեսակետից)¹⁴։

Բայց ի տեղի այսր ինձ դարձեալ զալ պիտի (Ե., 8-րդ, 269)՝ Բայց ես դարձյալ այստեղ պիտի գամ։

Պակասավոր բայերը կարող են եղանակիչ բայերի և տրականով ենթակայի հետ կազմել նկարագրական ձևեր, ըստ որում, հնարավոր է անորոշ դերբայի առկայությունը, ինչպես նաև բացակայությունը։

Օրինակներ՝ Այլ և զմեզ վրիպեցուցանել կամիս, ուրում չիք նմա, և մի՛ այլ լիցի (Ե., 3-րդ, 252)՝ Եվ դեռ մեզ էլ կամենում ես մոլորեցնել, որ անհնար է և չի լինի։ Բայց մեզ դեռ կայ պատմել ձեզ՝—զծնունդ Աստուածորդոյն որ ի կուսէն (Ագ., 2-րդ, ԽԲ, 195)՝ Բայց մենք դեռ պիտի պատմենք ձեզ աստվածորդու ծնունդը, որ կուսից է։ Թէ քեզ պէտ իցէ, այլ զինչ կամիս խօսել և առնել՝ խօսեա՛ց (Բ., 4-րդ, ԾԶ, 179)՝ Եթե դու խոսել ես ուզում՝ խոսի՛ր, ինչ որ կամենում ես (գործածված են չիք, կայ, եմ պակասավոր բայերը)։

Այսպիսով, տրականով ենթակայի կիրառությունը գրաբարում հիմնականում կապված է անորոշ դերբայի հետ, որը միայն սակավ դեպքերում (միադիմի եղանակիչ բայերի մոտ) բացառվում է։ «Աստվածաշնչի» լեզուն տրականի հետ անորոշի գործածության տեսակետից ունի որոշ յուրահատկություն։ Բայական իմաստով գործածված՝ ուղղական հոլովով անորոշ դերբայի մոտ տրականով ենթակայի սովորական կիրառությունից բացի (Այլ թէ յաջողեալ էին ճանապարհք իմ, պահել ինձ զարդարութիւնս քո (Աստ.-չ, Սաղմոս, ԾՁԸ, 114)՝ Երանի թե իմ ճանապարհները հաջողվեին, որ ես պահեի քո պատվիրանները), հաճախ են հանդիպում անորոշ դերբայի նախդրավոր ձևերի մոտ տրականով ենթակայի արտահայտությունները, որոնք, օրինաչափության համաձայն, պետք է լինեին սեռական հոլովով։

Օրինակներ՝ Եւ տէր լուիցէ ինձ ի կաբղալ իմում առ նա (Սաղմոս, 7, 15), Յայնժամ ես ոչ ամաչէի ի զգուշանալ ինձ ի պատուիրանս քո (Սաղմոս, ԾԺԸ, 114), Ի յաբձակեալ ինձ զշարաշար զնետս... ի վերայ նոցա, և եղիցին ի սատակումն (Եզեկիէլ, Ե, 710), Յառնել ինձ դա—

¹⁴ Ս տ. Մ ա լ խ ա ս յ ա ն ց, նշվ. աշխ., էջ 38։

տաստանս բարկութեամբ, և սրտմտութեամբ վրէժխնդրութեամբ ցասման (Նդեկիւլ, Ե, 710) և այլն:

Նախդրավոր այդ ձևերը ժամանակի զաղափար են արտահայտում՝ ի զգուշանալ ինձ՝ երբ ես զգուշանում եմ. ի կարգալ իմում՝ երբ ես կարգում եմ (կանչում եմ). ի յարձակել ինձ՝ երբ ես հարձակվեմ. յառնել ինձ՝ երբ ես անում եմ...

Այսպես, սեռականի փոխարեն տրականն էլ է դրվում էական բայերի մոտ¹⁵. Որպէս թէ ամեննիւն այնմ խնդրոյ չի՞ սպասուած (Նզ., 1-ին, 16)՝ Որպես թե այն խնդիրը բոլորովին վերջ չունի: Իսկ զո՞յր ինձ արդեօք հնար իշխանութեան (Ադ., 1-ին, ԻԲ, 126)՝ Արդյոք ես կարո՞ղ եմ համարձակվել: Խնդրոյ և ինձ տրականով ենթակաները դրված են էական-պականավոր բայերի (չիք. գոյ) հետ:

Մենք խոսեցինք տրականով ենթականի հետ կապված առանձնահատկությունների մասին, ցույց տալով, որ տրական հոլովով ենթական գործածվում է անորոշ դերբայի, միադիմի եղանակիչ բայերի և անորոշ դերբայի, ինչպես նաև անկանոն, պականավոր բայերի և անորոշ դերբայի կամ միայն անկանոն, պականավոր բայերի հետ՝ իրենց արտահայտած երանգավորումներով:

Այժմ կանգ առնենք տրական հոլովով ենթականի խոսքի մասային արտահայտության վրա: Գոյականները և դերանունները. ինչպես ուղղական, սեռական հոլովներով, այնպես էլ տրական հոլովով, ենթականի պաշտոն կատարելիս ծավալուն գործածություն ունեն, Տրական հոլովով ենթականի ֆունկցիայով հանդիպում են քիչ թվով ածականներ, մյուս խոսքի մասերը կամ չափազանց հազվադեպ են կիրառվում, կամ բոլորովին չեն հանդիպում:

Հատուկ և հասարակ գոյականները եզակի և հոգնակի թվով լինում են տրականով ենթակա: Հատուկ անվամբ արտահայտված՝ Ձէր հնար Մանմնայն հանգամանաց լուսոյն առնելոյ դուշակ լինել (Նզն., 2-րդ, 97)՝ Ձէր կարելի, որ Մահումը լույս ստեղծելու հանգամանքը հայտներ (Որմիզդին), Եւ ի դիպ իւ Աղամայ ասել՝ թէ մինչ առնելն կամեցար գիտ... (Նզն., 4-րդ, 179)՝ եվ պատշաճ էր, որ Աղամն աւեր՝ մինչ ուզում էիր ինձ ստեղծել...

Հատուկ անվան իմաստով գործածվում են այլ բառեր (աստված, որդի)՝ Դուռն՝ զոր բացին կորստեանն՝ Աստուծոյ միայն կարողութիւն է փակել զեա (Ն., 4-րդ, 130)՝ Դուռը, որ բացին կորստյան համար, միայն աստված կարող է փակել: Այնպես կախել պարտ է Ուրդոյ մարդոյ (Ադ., 2-րդ, ԾԱ, 225)՝ Այնպես պետք է կախել մարդու որդուն: Սրանք միայն եզակի լիով են գործածվում:

Հասարակ գոյականների եզակի թվով արտահայտված՝ Զի ոչ է մարյ հովութի յոգուլ զխաշն իւր, այլ պարտ է հովութի օղնել զանձն ի վերայ ոշխարին իւրոյ (Բ., 4-րդ, ԾԵ, 177)՝ Պետք չէ, որ հովիվը իր խաշները թողնի, այլ պետք է իր կյանքը զոհի ոշխարների համար: Մարդոյ լոկոյ անհնարին է զայսպիսի պայծառութիւն լուսոյ զղենուլ (Ն., 3-րդ, 211)՝ Անհնար է, որ սոսկական մարդը լուսավորվի այսպիսի պայծառ լույսով: Արդ եթէ զազանք շարի արարածք էին, և երկիր բարոյ, ծախել պարտ է զնուա երկրի (Նզն., 1-ին, 46)՝ Արդ եթե զազանները շարի արարածներ են, իսկ երկիրը՝ բարու, հողը պետք է նրանց ոչնչացնի: Այլ որպէս մարդոյ ոչ է հնար փոխել ի կերպարանս ինչ... Նոյնպէս և ոչ վիշապին (Նզն., 1-ին, 72)՝ Ինչպես անհնար է, որ մարդ փոխի իր կերպարանքը, այնպես էլ վիշապը չի... Պարտ է ապականությունան այսմիկ զղենուլ զանապականութիւն, և մահկանացոյիս այսմիկ զղենուլ զանմահութիւն (Նզն., 4-րդ, 202)՝ Այս ապականությունը պետք է հազնի անապականություն, իսկ այս մահկանացուն՝ անմահություն: Այլ ոչ իսկ էր պարտ նշմարտութեան և վկայիցն առաքինութեան, և ոչ լուսոյ ճըրադին բնդ գրուանաւ ծածկել. և ոչ ի ներքոյ ստուերաց կալնդրացն աներևոյթ լինել (Ազ., 2-րդ, ԻԵ, 89)՝ Պետք չէր, որ ճշմարտությունը, առաքինության վկաները, ճրագի լույսը ծածկվեին զրվանի տակ, և ոչ էլ պետք էր, որ աթոռները աներևութանային ստվերների ներքո: Զիա՞րդ հնար էր միօրեայ տոկալ մարդկային բնության մարմնոյ այն ահագին վտանգի շարշարանացն (Ազ., 1-ին, ԻԱ, 124)՝ Արդյո՞ք հնարավոր է, որ մարդկային մարմինը մի օրում դիմանար այն ահագին շարշարանքներին: Եւ կամ է՞ր արդեօք տղչկան միոջ մանկամարդոյ՝ ունել զղէմ առն սկայի (Ազ., 1-ին, ԻԲ, 127)՝ Եվ կամ ինչպե՞ս կարող է մի մանկամարդ աղջիկ հսկա մարդու դեմն առնել: Միթէ մա՞րդ ինչ իցէ մարդոյ փախել յաբշել յինէն ի ծածկոյթ իւր (Ազ., 1-ին, ԻԵ, 147)՝ Մի՞թե մարդ կարող է փախել թաքնվել ինձնից յուր ծածկի տակ:

Հասարակ գոյականների հոգնակի թվով արտահայտված՝ Որպէս օրէնք են ունել յազատուաց (Բ., 5-րդ, ԼԸ, 252)՝ Ինչպիսին թագավորներն են կրում, ունենում: Ձի հնար օրինացս մոդու-

¹⁵ Ա. Ա. Արտահայտան, Նշվ. աշխ., էջ 414, ծան. 5:

թեան ի Հայս առնուլ զհաստատութիւն (Ե., 3-րդ, 85)՝ Հնարավոր չէ, որ Հայաստանում հաստատութիւն գտնի մայրութեան կրօնքը Զ. պարտ՝ ոչ թափառուաց մահու հրաման տալ, և ոչ դատաւորաց ԲԵԵԼ և սպանանել զմարդասպանն (Եղե., 2-րդ, 112)՝ Բազմաթիւ չպետք է մահվան հրաման տան, ոչ էլ դատավորները տանջեն ու սպանեն մարդասպանին: Վասն զի չէ պարտ կենաց՝ վասն այնորիկ ոչ կամի կեալ և զլոյս տեսանել (Ազ., 1-ին, 70)՝ Որովհետև կյանքը պետք չէ նրա համար, ով չի կամենում ապրել և լոյս տեսնել, և յամբառնալ ԲԵՐՈՎԷԼԻԳ՝ զթևս իւրեանց ի վերանալն յերկրէ. ոչ դառնային յետս անիօք (Եղեկէլ, Ժ, 717)՝ Եվ երբ քերով-րենները բարձրացնում են իրենց թևերը՝ երկրից վերանալիս, անիվները չէին պտտում նրանց ետևում:

Երբ արարի բոլոր տեսակի զերանունները, բացի փոխադարձ զերանուններից, կատարում են տրական հոլովով ենթակայի պաշտոնը։ Նույն ատոմն էլ տեսակների բերենք որինակներ։

Անձնակտն դերանվամբ արտահայտված:

Ինձ — Բայց ի տեղիս այսր ինձ դարձեալ զալ պիտի (Ե., 8-րդ, 291)՝ Բայց ես դարձյալ
այստեղ պիտի գամ, ինձ լիցի պահել զուխտ աստուածապաշտութեան զոր ուսայ ի մանկութենէ
իմմէ (Ազ., 1-ին, 65)՝ Ես պիտի պահեմ աստվածապաշտութեան ուխտը, որ սովորեցի մանկու-
թյունից, ինձ ոչ է փոյր զայնմանէ, թէ նորոգեսցէ՝ զքեզ աստուածն քո թէ ոչ. ինձ ոչ է պէտ-
զայնմանէ (Ազ., 1-ին, 69)՝ Հոգ չէ, պետք չէ, որ ես իմանամ այն մասին, թե քո աստվածը
կնորոգի՝ քեզ, թե ոչ. ես չեմ ուզում իմանալ այն մասին:

Քեզ — Բայց քեզ արժան էր զիս ի հրապարակի սպանանել (Բ., 5-րդ, 2, 209)՝ Բայց դու ինձ պետք է հրապարակում սպանեիր: Արդ՝ փոխանակ կենացն զոր պարտ էր առնել քեզ՝ յաճախեմ քեզ նեղութիւն (Ազ., 1-ին, 31)՝ Այժմ կյանքի փոխարեն, որը դու պետք է ստեղծեիր հետապնդում եմ (յաճախեմ) քեզ նեղություններ տալ: Արդ՝ քեզ նախ պարտ է այսպիսի անհնարին աղետից խնդրել հնարս (Փ., ԺԳ, 19)՝ Այժմ, նախ դու պետք է այսպիսի անսահման աղետներէց ազատվելու հնարներ գտնես:

Նմա — Զի հնար լիցի նմա նախ ըմբռնել (Բ., 5-րդ, ԽԳ, 259)՝ Որ նա կարողանա նախ
բռնել: Զոր պարտ իցլ նմա պատճառ կարծել կամ իմանալ՝ եթէ ի նմանէ իցէ առեալ սկիզբն
էանալոյ (Եզն., 1-ին, 6)՝ Նա պետք է պատճառ կարծի կամ համարի նրան, որից էանալու
սկիզբ առնի, գոյանա: Զի՛նչ պիտոյ է նմա բարսմունս ունել և յաշտ առնել (Եզն., 2-րդ, 95)՝
Ինչո՛ւ նա պիտի ճյուղերը վերցնի և զոհ մատուցի: Թերևս հնար լիցի նմա զնորա տեղին ժառան-
գել (Ազ., 2-րդ, Ին, 146)՝ Թերևս նա կարողանա նրա տեղը (աթոռը) ժառանգել: Քանզի ոչ իսկ
էր հնար արգելուլ նմա ի նմանէ (Ազ., 2-րդ, ԾԶ, 238)՝ Որովհետև ան՛նար էր, որ նա արգելեր
նրանից:

Իւր — Ձի թէ աստուած էր, և իւր իսկ արժան էր արարածս առնել (եզն., 4-րդ, 174)՝ Թե որ աստված կար և ինքն իսկ պետք է արարածներին ստեղծեր: Որում չէր մարք իւր միայն իւրօրեկ զմարդն հասարակաց ստեղծուած (եզն., 4-րդ, 178)՝ Որի համար պետք չէր, որ ինքը մտածեր, թե մարդը երկուսի կողմից ստեղծված է:

Մեզ — նւ զի՝ պիտոյ է մեզ ընաւ մի ըստ միոջէ րուել (եզն., 1-ին, 15)՝ եվ ինչ պետք կա, որ մենք մեկ առ մեկ թվենք, Բայց նախ արժան է մեզ զգացուցանել թագաւորին զպէտսս այսպիսի մեծ և կարևոր խնդրոյ (Փ., Ժ, 14)՝ Բայց և նախ մենք պետք է զգացնել տանք թագաւորին այսպիսի մեծ և կարևոր գործի պետքերը:

Ձեզ — Ձայգ ձեզ ի վարդապետաց մերոյ արժան էր ուսանել (Ե., 8-րդ, 266)՝ Այդ դուք մեր ուսուցիչներէից պետք է իմանայիք: Ոչ է պարտ ձեզ հուպ լինել և մերձենալ առ նոսա (Ազ., 3-րդ, ՃԴ, 394)՝ Դուք չպետք է մոտենաք և մերձենաք նրանց: Արդ ոչ է հնար ձեզ ապրել ի մահուանէ, բայց չթէ երկիր պազանէք արեգականի (Ե., 8-րդ, 269)՝ Այժմ հնար չկա, որ դուք փրկվեք մահվանից. (և հնար չկա)՝ բացի արևին երկրպագելուց:

Նոցա — հորհէր, թէ պարտ է նոցա քաղաք մի շինել յերկրին Հայոց (Բ., 17, 241)՝ հորհում էր, թե նրանք մի քաղաք պետք է շինեն Հայոց երկրում, եթէ փոյր ինչ ոչ է նոցա յայնմ հետէ սուրբ սպանելոցն (Ե., 8-րդ, 264)՝ Թե այնուհետև նրանք չեն հոգալու սուրբ սպանվածների մասին:

Ստացական գերանվամբ արտահանված: Եւ տէր լուիցէ ինձ ի կարդալ իմում առ նա
(Աստ.-չ, Սաղմոս, Դ, 15)՝ եվ տերը կլսի ինձ, երբ ես կանչեմ նրան:

Ցուցական դերանվամբ արտահայտված, եւ զիտորդ հնար էր այնմ լինել (Ազ., 1-ին, 2Բ, 128)՝ եվ ինչպե՞ս էր հնարավոր նրա լինելը, հնարավոր էր արդոյոք, որ նա լիներ, եւ չէ պարտ կեալ դմա (Բ., 5-րդ, լե, 243)՝ Դա չպետք է ապրի, եթէ որ ի ճակատագրին գրեալ ի հրամանացն այնմ չէ հնար վրիպել (եզն., 2-րդ, 112)՝ Ինչ հրամաններ որ գրված են ճակատագրի-

մեջ, չեն վրիպի (այնմ-ի փոխարեն պետք է լիներ այնց՝ հոգնակի թվով)։ Այլ զոր արքն կամի-ցին և կանայքն ախորժիցին, այնց ընդ այնս լինել (Եզն., 3-րդ, 143)՝ Այլ որը ցանկանում են մարդիկ և կանայք ախորժում են։ Նրանք թող լինեն նրանց հետ։

Հարցական և հարաբերական դերանուններով արտահայտված։ Ապա յայնմ ժամանակի միարան խորհեցան աշխարհօրէն խորհուրդ, եթէ ո՛ւմ պարտ իցէ զհայրապետութեան զկաթողիկոսութիւն ունել (Բ., 3-րդ, ԺԷ, 45)՝ Այն ժամանակ բոլորը աշխարհովի խորհուրդ արին, թե ով պետք է հայրապետության աթոռին նստի։ Խորհեցին վասն իրենանց առաջնորդի, թէ ուս արժան իցէ նստել յաթոռ հայրապետութեանն (Բ., 4-րդ, Գ, 68)՝ Բող մտածեն իրենց առաջնորդի մասին, թե ով պետք է նստի հայրապետական աթոռին (այս և նախորդ օրինակներում հարցական դերանունները գործածվում են առանց հարցման, հարաբերական երանգով)։ Այլ և զմեզ վրիպեցուցանել կամիս, որում լի՛մ հնար, և մի այլ լիցի (Ե., 8-րդ, 252)՝ Եվ գեռ մեզ կամենում ես մոլորեցնել, որը հնարավոր չէ և չի լինի։ Ուրոց պարտ է պաշտել զնա և առնել զկամս նորա (Ազ., 1-ին, 31)՝ Որոնք պետք է պաշտեն նրան և նրա կամքը կատարեն։

Անորոշ դերանուններով արտահայտված։ Ապալէն պարտ էր ումեմ ի միջի լինել, որում զհաշտն առնէր (Եզն., 2-րդ, 91)՝ Ապա ուրեմն մեջտեղ պետք է մեկը լիներ, որի համար զոհ աներ, զոհ մատուցեր։ Զի ոչ է մարչ ումեմ սկիզբ առնուլ լինելոյ, եթէ ոչ յայլմէ առնուցու զլինելն (Եզն., 2-րդ, 91)՝ Որովհետև մեկը չի կարող լինելու սկիզբ առնել, եթե ուրիշից չի առնել լինելը, եթե ուրիշից չի առնել լինելու սկիզբը, եթե ուրիշից չի ծագել։ Որ զմի մի ոչ ումեմ լինէր հնար դայն շարժել (Ազ., 3-րդ, ԾԶ, 398)՝ Հնարավոր չլիներ, որ մեկը շարժեր այն մեկ-մեկ։ Զի մի ումեմ լիցի խէթ և խութ այնուհետև ընդ որս անկանել (Ազ., 3-րդ, ԾԸ, 403)՝ Որ մեկն այնուհետ որսի ժամանակ դար ու փոս չընկնի։ Եւ ընչի ի մի՛մ յոչընչի չէ հնար զնալ (Եզ., 2-րդ, 131)՝ Եվ ինչ որ բան չի կարող ոչնչի մեջ քայլել։

Որոշյալ գերանվամբ արտահայտված։ Որպէս ի նոյն իսկ զի բարեաց գործոց նախանձաւոր լինել ամենեցուն ստիպէ ասելովն (Կ., Բ, 32)՝ Որպեսզի ամենքը նախանձավոր լինեն նման բարի գործերի, ստիպում է՝ ասելով...

Ածականները ենթակայի պաշտոնով հանդես են գալիս, երբ գործածվում են գոյականաբար՝ անորոշ և որոշյալ առումներով։ Նրանք եզակին և հոգնակին լինում են ենթակա։

Ածականների եզակի թվով արտահայտված։ Հարկ է անտևակալին մեռանել (Եզն., 1-ին, 51)՝ Անտևականը պետք է մեռնի։ Քանզի մարմնաւորի չէ հնար մտանել (Եզն., 1-ին, 75)՝ Որովհետև անհնար է, որ մարմնավորը մտնի։ Նույնպես և ոչ բարւոյն ընդ շարին մարչլ ի միում արգանդի հղենալ (Եզն., 2-րդ, 92)՝ Նույնպես էլ բարին չի կարող շարի հետ մի արգանդում հղանալ։

Հոգնակի թվով արտահայտված։ Որով յայտ է թէ երկուց անաբարաց ի միասին չէ մարչ լինել (Եզն., 1-ին, 17)՝ Որով հայտնի է, թե երկու անաբարները միասին չեն կարող լինել։ Վասն դի չէ մարչ յօղումովիցն ի միոջէ պարզ բնութենէ ունել զհաստատութիւնն. քանզի յօղումծոյթն ի պարզական բնութեանց յօդին (Եզն., 1-ին, 24)՝ Այն պատճառով բաղադրվածները (մի բարդությունը) չեն կարող մի պարզ տարրից զոյացած լինել, որովհետև բաղադրյալները պարզ տարրերից են բաղկացած։ Ձէր հնար վնասակարացն ընդ իրենանց վնասակարին բնուելովիւն ունել (Եզն., 1-ին, 49)՝ Հնարավոր չէր, որ վնասակարները իրենց վնասակարի հետ ընտելանան։ Ձէր մարչ անմարմնոցն ընդ կանայս մարմնաւորս ամուսնանալ (Եզն., 1-ին, 79)՝ Ձէր կարելի (անհնար էր), որ անմարմինները մարմնավոր կանանց հետ ամուսնանային։ Ձի՛մ հնար վերջնոցն՝ որ անկան անդր՝ թէ ելանիցեն (Եզն., 4-րդ, 190)՝ Վերջինները չեն կարող դուրս գալ, որ ընկան այնտեղ։

Դերբայով արտահայտված։ Այս բանք են զոր խօսեցայ ընդ ձեզ՝ մինչ առ ձեզն էի, թէ պարտ էր լնուլ ամենայն գրելոցն յօրենսն Մովսիսի և ի մարգարէս և ի սաղմոսս վասն իմ (Ազ., 2-րդ, ԾԸ, 245)՝ Այս խոսքերը խոսեցի ձեզ հետ, երբ ձեզ մոտ էի, թե պետք է բոլոր գրառումները մտցնել Մովսեսի մատյանները, իմաստության գրքերը, սաղմոսարանները՝ հօգուտ ինձ։

Մյուս խոսքի մասերը տրական հոլովով ենթակայի պաշտոնով չեն հանդիպում։

Խոսքի մասերի՝ ենթակայի ֆունկցիայով հանդես գալու վերաբերյալ խոսելիս կարևոր է նշել մի հանգամանք ևս։ Հայտնի է, որ գրաբարի սեռական և տրական հոլովածները միմյանց նման են՝ չհաշված որոշ դերանուններ, թվականներ, ինչպես նաև մի քանի գոյականներ ու ածականներ։ Սեռականում և տրականում ձևական նմանություն չունեցող այդ բառերի միջոցով հեշտությամբ տարբերվում են իրենց իսկ հոլովների կիրառական նշանակությունները։ Եվ ձևական որոշակի տարբերություն ունեցող բառերը, առանձնապես դերանունները, շատ անգամ հիմք են հառաչում գտնելու սեռական և տրական հոլովներին վերաբերող օրինաչափությունները, ասենք,

կոնկրետ դեպքում սեռական և տրական հոլովներով արտահայտված ենթականյի օրինաչափությունները: Սակայն, դա գործի մի մասն է, այնուհետև հնարավորություն է ստեղծվում գտնված, որոշակի դարձած կանոնների և օրինաչափությունների միջոցով ճիշտ որոշել այն բառերի հոլովական կիրառությունները, որոնց սեռականն ու տրականը ձևով նման են:

Օրինակներ՝ Բայց մարդոյ առեալ զանձնիշխանութիւն, ում կամի՝ ծառայանայ (Նզն., 1-ին, 29), Այլ որպէս մարդոյ ոչ է հնար փոխել ի կերպարանս ինչ (Նզն., 1-ին, 72):

Սույն հեղինակի մոտ նույն բառի նման հոլովաձևերը միևնույն անդամի՝ ենթականյի պաշտոն են կատարում, սակայն մաքուր ենթական առաջին նախադասության մեջ դրված է սեռական հոլովով, երկրորդ նախադասության մեջ՝ տրական հոլովով:

Բայց այդ ինչպե՞ս որոշեցինք:—Սեռական և տրական տարբերակված հոլովաձևերի, օրինակ, անձնական, ցուցական, հարաբերական, անորոշ դերանունների և այլնի միջոցով որոշված է այն օրինաչափությունը (կուրա սաստեալ գազանին—Նզն., 1-ին, 49, նմա պարտ էր հարկանել զայն զսպասաւորութիւնն—Նզն., 2-րդ, 127), որ անցյալ դերբայի հետ գործածվում է սեռականով ենթական, անորոշ դերբայի վրա դրված միադիմի բայի հետ՝ տրականով ենթական: Սրանով էլ որոշվում են այն շեղումները, որոնք երբեմն տեղ են գտնում գրաբարյան երկերում: Հետևապես, սխալ շենք վարվում, երբ «Յանձնեալ ձեզ ի նոցանէ աղօթիք...», «Այլ ումեք ի ծառայիցն ոչ կարացեալ» անցյալ-դերբայական նախադասություններում ենթականյի պաշտոնով ձեզ և ումեք տրականաձև դերանունների կիրառությունը սխալ ենք համարում, որակում ենք որպես շեղում՝ ճիշտ համարելով տվյալ դեպքում ձեռ և ուրում ձևերը, որոնք նույն դերանունների սեռականն են:

Եթե այստեղ սեռականի և տրականի տարբերությունները որոշ մ ենք զխափորապես լեզվական-քերականական միավորների ձևական և ձևաբանական փաստերի հիման վրա, ապա մի այլ դեպքում առավելապես հաշվի ենք առնում երևույթի իմաստային կողմը: Օրինակ, անորոշ դերբայի հետ գործ է ածվում և՛ սեռականով, և՛ տրականով ենթական («Մինչև կատարել նորա գտունն իւր», «Եթէ անսաստել ումեք Աստուծոյ շար է և ոչ բարի»): Այս դեպքում էլ նկատի ենք ունենում անորոշ դերբայի իմաստն ու կիրառությունը. եթե գոյականական իմաստ է արտահայտում, ընդունում է սեռականով ենթակա, իսկ եթե պահում է բայական բուն նշանակությունը, ընդունում է տրական ենթակա:

Բայց անորոշ դերբայի կիրառության իմաստային կողմի հաշվառմամբ նրա՝ որ հոլովով դրված լինելու ստուգությունը դարձյալ հավաստվում է տարբերակված սեռական ու տրական ձևեր ունեցող խոսքի մասերով: Ուրեմն, տվյալ դեպքում քննվող հարցը ճիշտ է լուծվում, եթե այն զննում ենք ձևա-իմաստային տվյալների փոխկապակցության մեջ:

Այսպիսով, փաստական նյութի ուսումնասիրությունն ու քննությունը հանգեցնում են հետևյալ եզրակացություններին՝

1. Տրականով ենթական գործածվում է՝

ա) անորոշ դերբայի հետ, որը բայական նշանակությամբ է կիրառված: Այդպիսով ստացվում է տրականը անորոշի հետ կապակցությունը (dativus cum infinitivo):

բ) անորոշ դերբայի վրա դրված (կամ առանց դերբայի) միադիմի եղանակիչ, ինչպես նաև անկանոն ու պակասավոր բայերի հետ, որոնք արտահայտում են հարկադրական-պարտավորական, անհրաժեշտության, կարելիության, հնարավորության, հարմարության և նման երանգավորումներ:

Կիրառական այդպիսի ձևեր գտնում ենք և ռուսերենում:

2. Խոսքի մասերից տրական հոլովով ենթականյի պաշտոնով համեմատաբար լայն տարածում ունեն դերանունները, գոյականները, ապա ածականները. մյուս խոսքի մասերը հանդիպում են հազվադեպ կամ բոլորովին չեն հանդիպում:

3. Որոշակի են նաև այն միջոցները, որոնցով կարելի է տարբերել սեռական և տրական նման հոլովաձևերը շարահյուսական կիրառությունները: